— Ինքը աշխարհքէս քաշուած է, վանքի մը մէջ կրօնաւոր է։

— Կրօնաւոր, կրօնաւոր ըսիր. ո՛հ, ըսէ ինծի որ վանքին մէջ է, որովհետև հարկ է որ այն վանքէն ելլէ. երբ Աստուած հանճարոյ կնիքը մէկու մը ճակատը կը տպաւորէ, պէտք չէ որ այն մարդը առանձնութեան մէջ ոչնչանայ։ Աստուած վսեմ պաշտօն մը տուեր է անոր, զոր լրացնելու պարտք ունի։ Ըսէ ինծի այն վանքին անունը, ուր քաշուած առանձնացած է այն հանճարը, ըսէ որ երթամ հանեմ զինքը հոնկէ ու տանիմ ցուցընեմ այն փառքը՝ որ իրեն կը վայելէ։ Եւ եթէ յանձն ալ չառնու, Սրբազան Պապին ձեռքովը հրաման կը հանեմ՝ որ աշխարհ դառնայ և իր վրձինը դարձեալ ձեռք առնու։ Սրբազան Քահանայապետը զիս կը սիրէ, հայր, և խօսքս գետինը չիձգէր։

— Ա՛հ, չէ, ոչ անունը և ոչ վանքը՝ ուր ինքը քաշուած է՝ ըսեմ պիտի ձեզի, պատասխանեց կրօնաւորը անվեհեր ձայնով մը։

— Ցիրաւի. բայց Սրբազան Պապը քեզի զանոնք յայտնելու հրամայէ պիտի, աղաղակեց Ռուպէնս յուսահատութեամբ։

— Մտիկ ըրէ ինծի, ըսաւ կրօնաւորը, մտիկ ըրէ։ Կարծես թէ այն մարդը աշխարհս ձգելէն և փառքէ ու բաղդէ հրաժարելէն առաջ, ինքն իր անձին դէմ սաստիկ կռուած չէ՞ ասանկ դիտաւորութիւններու համար։ Կարծես թէ չէ՞ ունեցած անանկ դառն պատրանքներ և անգութ վիշտեր՝ որոնց պատճառաւ ճանչցած ըլլայ վերջապէս, թէ ամեն բան այս աշխարհիս վրայ ընդունայնութիւն է։ Ուրեմն թող տուր անոր որ մեռնի այն անդորը ապաստանարանին մէջ՝ որ աշխարհիս և անոր փորձանացը դէմ ընտրեց։ Արդէն քու ջանքդ փուճ պիտոր ելլայ. ատիկայ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ փորձութիւն մը որուն ինքը ջանայ պիտի յաղթելու, որովհետև Աստուած իր օգնութիւնը անոր վրայէն պակաս պիտի չընէ։ Այն Աստուածն որ իր ողորմութեամբն հաճեր է զինքը իրեն կանչելու, իր ներկայութենէն պիտի չմերժէ զինքը։

— Բայց, հայր, իր անուան անմահութենէն կը հրաժարի այդ մարդը։

— Անուան անմահութիւնը ոչ ինչ է հոգւոյ յաւիտենականութեան առջին։

Ըսաւ կրօնաւորը, և երեսին վրայ իջեցնելով վեղարը, խօսքը փոխեց, ասանկ որ Ռուպէնս ալ այն նիւթին վրայ խօսքը երկնցընելու խափանուեցաւ։

Ուստի աշակերտներուն ընտիր բազմութեամբը վանքէն ելլելով, տխուր ու լռիկ մտածութեանց մէջ ընկղմած, դարձան ամենքը Մատրիտ։

Իսկ մեծաւորը իր սենեակը մտնալով ծունկ չոքեցաւ յարդէ անկողնին վրայ՝ որ մահճի տեղ կը ծառայէր իրեն, և ձեռքերովը երեսը ծածկելով ջերմեռանդն աղօթք մը ըրաւ Աստուծոյ։ Յետոյ վրձինները, ներկերը և տախտակակալ յենարանը առնելով որ սենեկին մէջ գետինը դրած էր, ամենը մէկտեղ սենեկին տակէն վազող գետին մէջ նետեց, տխրադէմ դիտելով քիչ մը ատեն այն նիւթերը՝ որ գետին ջրերը առած կը տանէին։ Երբ անոնք տեսութենէն անյայտ եղան, դարձաւ նորէն անկողնին վրայ ու փայտեայ խաչելութեան առջին նստելով՝ աղօթքը շարունակեց։

ԹՐԳ. Ս. Հ.

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես երես 125)

ՀԱՆԴԷՍ Գ

Հրապարակ

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԿԻՄԲՐՈՍ, ԴԵԿԻՄՈՍ

Դեկ. Ճշմարտութեամբ ասեմ քեզ, եթէ տեսի ես զԲրուտոս զի ելեալ ասի զնայր խուճապեալ, և արտասուք իւր յաչս. եթէ մարթ ինչ ի՞նչ փոխել նմա 'ի խորհրդոցն...

ԿԻՄԲ. Օ՛ն անգր. Բրուտոս սիրէ զՀռովմ, սիրէ նա զուղղութիւն և զփառս. վայրիկ մի ևս և հասանէ նա այսր առ մեզ ըստ իւրում բանի:

ԴԵԿ. Ահաւասիկ տեսանեմ զոմն զի տագնապաւ գիմեալ գայ առ մեզ:

ԿԻՄԲ. Ո՞չ նա ինքն իցէ, կամ Կասսիոս:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԿԱՍՍԻՈՍ խօսէ.

ԿԱՍ. Եհաս ժամ, ով քաջք, կենդանութեան Հռովմայ. տիեզերաց թագուհին կապտեսցի այսօր յարքայէն իւրմէ. ձեր են պարծանքս, քաջաղանք Հռովմայ. փոքր միւս ևս և կորիցէ բրնաւորն, բարձցի 'ի միջոյ: Գործ, առ որ տակաւցան Պոմպէոս և Կատոնն, և Լիբիա և Սպանիա համօրէն, 'ի ձեռս մեր կատարեսցի այսօր. ինդրեսցուք զվրէժ հայրենեաց. և 'ի ծագս աշխարհի քարոզ կարդասցեն զպաշտօն հարկանել մերս Հռովմայ. զի ոչ ևս է նա արդ ծառայ:

ԿԻՄ. Պատրաստ եմք ամենեքին ընդ քեզ 'ի մահ և 'ի կեանս, 'ի սպանանել և 'ի կեցուցանել. միայն զի պաշտեսցի Հռովմ և ատեան ծերակուտին. զմահ 'ի կենաց ոչ խարեմք. կամ բռնաւորն սատակեսցի 'ի մէնջ, և կամ մեք առ 'ի նմանէ պատահեսցուք մահու:

ԴԵԿ. Այլ զի՞ գործէ Բրուտոս, դեռ ևս չէ նա 'ի միջի. Բրուտոս դահիճ բռնաւորին՝ որ զմեզ երգմնի արար, և երդուաւ առաջին 'ի Կեսար զձեռն մխել. զի՞ է զի այսքան յապաղեաց, միթէ արդեաւ՞ նա ուրեք, կամ թէ յայտնեցաւ՞ ինչ Կեսարու նենգն:

ԿԱՍ. Ոչ ինչ, որպէս կարծեմ. և Բրուտոս լի ցասմամբ տեսի զի գայր տագնապաւ. մի ինչ զանգիտէք 'ի նմանէ. իմ առաւել յանձն քան 'ի նա է յուսացեալ... Տեսէք, քաջք, եթէ զիա՞րդ գործեցին, զիա՞րդ վառեցին զնա սակաւ ինչ թուով տաքն՝ զոր գրոշմեցաք առ ոտն Պոմպէի:

ԴԵԿ. Ահաւասիկ նա. բա՛ր է, զիա՞րդ տագնապեալ երևի:

ՏԵՍԱՐԱՆ Գ

ԲՐՈՒՏՈՍ խօսէ.

ԲՐ. Իսկ զիա՞րդ, զձե՞զ միայն գտանեմ:

ԿԱՍ. Եւ միթէ սակաւ ինչ իցեմք մեք, յորժամ և դու ընդ մեզ իցես:

ԿԻՄԲ. Զի՞նչ իցէ տագնապ որտիդ, Բրուտէ, եթէ գիտա՞ց ինչ բռնաւորն, մատնեցա՞ւ Հռովմ:

ԲՐ. Ոչ. Կեսար ոչինչ գիտէ զմահուն իւրոյ, նա 'ի ձեզ վստահացեալ է:

ԿԱՍ. Եւ զի՞նչ այդպէս խռովեալ ես:

ԲՐ. Ո՞՛ր իցէ Տուլլիոս. ես ցարդ զհետ նորա շրջէի:

ԿԻՄԲ. Ո՞չ գիտես՝ զի առեալ զոմանս 'ի Սենկլիտոսէն եւ նա չտապաւ 'ի Հռովմայ:

ԿԱՍ. Թառամեցոյց ծերութիւն զառաջին բոց աբութեան նորա:

ԲՐ. Սակայն ոչ շինոյց. ա՜հ, մի՞ զի հռովմայեցի իշխեսցէ երբեք արհամարհել զՏուլլիոս. երդուեալ 'ի գիս, եթէ ոչ յառաւելագոյն օգուտ Հռովմայ՝ պահեսցէ նա զանձն իւր և զաղատութիւն:

ԿԱՍ. Այլ մեզ բիւր երանի. զի հաւատի եմք կամ յալիս ծերութեան աղատութեամբ հասանել, կամ ասէն 'ի ծաղկի առոյգ հասակին վաղամեռիկ լինել ընդ Հռովմայ:

ԲՐ. Ա՜հ, արդարև երանի է ձեզ. այլ ինձ ոչ բնաւ. ուր կամ անգթութեամբ մեռանել և կամ կենդանութեամբ ծառայ լինել կայ ինձ առաջի:

ԿԱՍ. Զի՞նչ կամիս ասել դու:

ԿԻՄԲ. Ցերկարագոյն նուագաք բանից դիկատատորին զի՞նչ իմացար:

ԲՐ. Ոչինչ վասն Հռովմայ. միայն վասն իմ տասկուսն և արհաւիրս մահու և ձեզ ատելութիւն, թերևս խառն ընդ թշնամանս:

ԿԻՄԲ. Ցո՞ր վերայ այս թշնամանք:

ԲՐ. Բրուտոսի, յիմ վերայ:

ԿԻՄԲ. Զքե՞զ նախատել...

ԿԱՍ. Զքե՞զ. որ կենդանութիւնդ ես Հռովմայ և մեր:

ԲՐ. Ես եմ... ո՜ անհաւատալի բանք. աւա՜ղ ինձ. կարծէի ցարդ եթէ փեսայ իցեմ ես մեծին Կատոնի և Թոռն. սակայն...

ԿԱՍ. Զի՞նչ իցէ, աղէ ասա. զի՞նչ նոր ինչ լուար, զի զարհուրեալ ես:

ԲՐ. Լուր գառնութեան յունկն իմ հնչեաց, որ կարողն է և զձեզ զարհուրեցուցանել:

ԿԱՍ. Անշո՞ւշտ է մահ բռնաւորին կամ մեր. մեռցուք առ հասարակ, այլ զարհուրիլ ոչ բնաւ:

ԲՐ. Մի՞ այդպէս. մի՞ այդպէս. անտա դու ինձ վայր մի, և ես արդ զարհուրեցուցից զքեզ:... Պարտ անձին դատիմ ես սպանանել զԿեսար, վասն Հռովմայ, վասն մեր և վասն յաջորդացն մերոց և վասն աշխարհի փրկութեան. ես իսկ նախ ամբարձի զձեռն իմ 'ի վերայ նորա, ժամ և տեղի սահմանեցի կորստեան նորա, սակայն... սակայն գիտասջիք արդ զի Բրուտոս... Բրուտոս...

ԿԻՄԲ. Զի՞նչ իցէ:

ԲՐ. Բրուտոս որդի է նորա:

ԿԱՍ. Դու որդի՞ իցես նորա:

ԴԵԿ. Կեսարո՞ւ:

ԲՐ. Ծնունդ եմ դառնարմատ արգանդին Սերվիլիայ:

ԴԵԿ. Ո՛վ Հռովմ:

ԿԻՄԲ. Բրուտոս որդի՞ բռնաւորի:

ԿԱՍ. Ո՛չ. ոչ ես դու նորա որդի. քաջ իսկ հռովմայեցի ես դու, Բրուտէ. դու ինքնին քո ես որդի:

ԿԻՄԲ. Եւ որո՞վ օրինակաւ հաւատարմացոյց քեզ զայդ Կեսար:

ԲՐ. Բազում օրինակաւ. նախ այն իսկ, զի հայրաբար ընդ իս վարեցաւ բանիւք, հայրօրինակ գթով ինձ գիրկս ածէր, և իւրում արքայութեան ժառանգ անուանէր: Բայց գլուխ ամենայնի, թուղթ մի մահաշչուկ ետ ինձ ընթեռնուլ, գրեալ առ նա մատամբ Սերվիլիայ. յորում նախ քան զարձակել փողոյն ռազմին Փարսալիայ՝ զնա իւրեանց որդի բազում դողութեամբ ազդ առնէ նմա:

ԿԻՄԲ. Ո՛վ գուժալից բարբառ. ո՞ խորհուրդ ահագին. հի՞մ դու մինչ 'ի սպառ ոչ պատանդեցար 'ի ծոց խաւարին:

Բր. Այլ և արդ նա զբռնաւորութիւն իւր փառս համարի, կամ յամառեալ պնդեալ կայ արքայութեան կամ մահու հանդիպել։

Կաս. Եւ հասցէ նմա մահ։

Կիմբ. Անողոքելի է բռնաւոր. բայց աղէ դու, Բրուտէ, այս քեզ յուշ լիցի, որդւոցս Հռովմայ ոչ գոյ հայր։

Կաս. Իւ այր բռնաւոր որդիս ոչ ունի։

Բր. Եւ այսուհետև ոչ հանդարտեսցէ սիրտ Բրուտոսի։ Ա՜հ, ամօթ մեծ է ինձ այս, ո՞վ քաջք. այլ աղէ դուք ակնատեսք և ականջալուրք չարեացս, նստայք դատաւոր իմոյս բաղդի. զինչ արժան իցէ գործել, ընտրեցէք։ Է՞ ոք թերևս 'ի ձեզ արդարակորով Սաոյիկոս վեհ քան զմարդ մահացու, որ ընտրեսցէ ինձ զարիւնս. ահաւասիկ ես 'ի ձեզ եմ ապատան։ Իսկ զիա՞րդ այր այր իւրաքանչիւր զաչս 'ի խոնարհ ունի. լռեալ կաս և դու, Կասսիէ. յայս անդունդ ապահգին ոչ ոք առ իս ձեռն կարկառէ, յոՀիր յանցանաց աստի կամ 'ի վատութենէ զիս ոչ ոք փրկէ։ Հեծեա՛, Կասսիէ։

Կաս. Հեծեմ ընդ խորհուրդս՝ զոր կամիմ տալ քեզ։

Բր. Աղէ ասա։

Կաս. Եթէ իբրև զմի 'ի ռամիկ մարդկանէ իցես և դու, երթ ծառայեա այսուհետև, հօր քումմ նմանեաց. հաւ սատակեա բռնութեամբ զորս միանգամ պարտ է խնամել. լեցի և հայրենեացս այլ ոմն վրիժապարտ բռնաւոր, զոր և գիտասցէ արագ արագ պատուհասակոծ առնել։ Այլ զինչ. իմ բանք առ Բրուտոս են, առ դիւցազն այն քաջ Թշնամի անօրէն բռնաւորաց, որոյ սիրտ քաջազուն արդարութեան միշտ արթուն պահապան, զանարժան արիւն Կեսարու զտեսաց և սրբեաց։ Աղէ ասա, յիշես դու արդեօք զսպառնալիս կատաղութեան Կատիլինեայ առ մեր հայրենիս։

Բր. Եւ կարի իսկ քաջ։

Կաս. Քաջ է. իսկ արդ եթէ անդ ուրեմն յաւուր վախճանի ազատութեան Հռովմայ 'ի մարդախոշոշ նենգաւորէն, և 'ի հասեալ ժամու արդարադատ պատուհասի հասարակաց մեր Թշնամւոյն, նա զքեզ իւր սիրելիր որդի ողջունէր, ասա զի՞ գործէիր դու յայնժամ, ուր կամ 'ի մեզ և կամ 'ի նա հասանէր քեզ անկանել։

Բր. Բա՜ռք, բա՜ռք, զինչ ինչ Կասսիոս 'ի հարց փորձ ածէ. ա՜հ, սդՀչափ ուրեմն տկար և անարդ համարեցար զիմ առաքինութիւն, որպէս զի և վայրիկ մի անգամ զմեր հայրենիս ընդ անօրինին 'ի կշիռ ձգիցեմ։

Կաս. Շատ է արդ, Բրուտէ, շատ է. խօսք քո իսկ ցուցանեն քեզ զարժանն. այդ սահման է ծերակուտին, առհաւատչեայ մերումս ազատութեան. փրկեցաւ Հռովմ։ Այլ դու ասա ինձ, զգացեր ինչ երբեք ամբոխումն սրտի և մտաց. զոր անմիտ խորհրդով բնութեան ընծայել բնաւորեալ են ռամիկք. մի միայն բան Կեսարու խլեաց 'ի սրտէդ զսէր հայրենեաց, զպարտս քո և զերդումն։ Արդ խորհուրդ մի յաշ կամ յահեակ յայտնեաց նա քեզ, և զքեզ իւր որդի դաւանեաց. աղէ ասա եթէ վրիպեաց նա վասն այնորիկ և կամ վերջացաւ երբեք 'ի բրնաւորութենէ անտի և 'ի դատապարտութենէ. միթէ ո՞չ ևս իցես դու Բրուտոս, ո՞չ նոյն ինքն հռովմայեցին. միթէ ո՞չ մեր իցէ սիրտ քո և բազուկ և անձնդ ողջոյն։ Կեսար հայր քո է. այդպէս իցէ. այլ ո՞չ ևս մայր քո իցէ Հռովմ. մեք քո նիզակակիցք՝ ո՞չ քո իցեմք եղբարք. ո՞չ դու ասա ընդ մեզ 'ի յարկս առաքինութեան ծնարծնունդ Բրուտոսի, սնունդ Շիպիոնի. սիրելի Պոմպէի, փեսայ Կատոնի և բարեկամ իմ Կասիոսի. զի՞ ևս խնդրես. այս անուանք պաշտելի, զոր ամենեքեան յամօթ առնեն և յառակ նշաւակի։ Զի՞ փոյթ է քեզ՝ եթէ բռնաւոր ոք սեղեխ Սերվիլիայ ետ քեզ կեանս. սակայն և ոչ այնպէս. զայդ քո սիրտ քաջազուն տնկեաց 'ի քեզ դիւցազն Կատոնն. նա ինքն Բրուտոս յարգարեաց զքեզ. Կատոնն՝ նա միայն է քո հայր հարազատ. անտի է քո տառաքինութիւն, անդուստ և շունչ քո գլխովին։ Թզեա արդ, խզեա զամօթալի կապանն՝ որ զքեզն կաշկանդեն. յիշեա զերդումն մեր, յամօթ լեր, պատկառեաց բնաւ և հայր իսկ անուանել զնա, որ չէ իսկ որդի, այլ Թշնամի Հռովմայ։

Բր. Զինչ ունիք ասել և դուք, մտերիմ բարեկամք։

Կիմբ. Զէր ոք արդեօք քան զմեզ անարժան որդի Հռովմայ, եթէ այլ ինչ խորհուրդք էին 'ի մերումս սրտի. այլ զի՞ պիտոյ է խորհուրդ հարցանել յայլոց յաղագս այսորիկ. հարց զսիրտ քո, հարց զԲրուտոս։

Բր. Մերկացի ուրեմն և իմ սիրտ. տեսէք 'ի նմա արհաւիրս, տեսէք սրտմտութիւն և ամբոխումն տագնապողական։ Ա՜հ, սիրտ իմ անկաւ. յիմոց ասի ստոյիկեան աչաց արտասուք ցօղին։ Ցետ ահաւոր երդմանցն 'ի սէր Հռովմայ, այլ 'ի մահ ծնողիս, զամօթի հարեալ կամ և ընդ որդիութիւնս հեծեմ դառնապէս. գարշիմ մերժիմ 'ի չարեաց նորա, և զարմացեալ եմ ընդ առաքինութիւն նորա, բռնաւոր և դիւցազն, Թշնամի և հայր ծանուցեալ զնա. Կեսար և Հռովմ զսիրտ իմ պատառեն. 'ի վերայ նոցա սիրտ իմ գելանի. և հարեալ յերկիւղէ և 'ի գթութենէ, 'ի սիրոյ և 'ի բարկութենէ, յօրինաց, 'ի բնութենէ և յայլոց բռնաւոր կրից, ցանկամ մահուն որ պատրաստեալ կայ Կեսարու։ Տուք ինձ հրաման, ո՞վ քաջք, և առուցեալ իմն լուիջիք. զայս այսպէս գիտասջիք դուք, զի պանչելի է Կեսար յաչս իմ, ոչ զօրեմ ատել զնա. այն նորա վեհազուն սիրտ՝ բաւական է միայն 'ի դիւրել զանգիս. և թէ ուստ արժան իցէ իշխել Հռովմայ, նա միայն է բռնաւորն ներելոյ արժանի։... Սակայն պինդ կացէք, ո՞վ քաջք. ա՜հ, այն միայն անիծեալ անուն բռնաւորի՝ զիմ սիրտ տապալէ. Հռովմայ և ծերակուտին և ձեր առ հասարակ յիս յինքն ակնկառոյց են աչք. օգուտ տիեզերաց յականջս իմ խօսի ընդդէմ արքայի. մի՞ ինչ զանգիտէք, քաջ նիզակակիցք իմ, զգեցայց ես դարձեալ զիմ արիական առաքինութիւն. հեծեմ յաչս ձեր, այլ զուխտիցն հաւատարմութիւն ես ոչ մոռացայց. այժմ իսկ ընդ հուպ դարձեալ միասանգամ 'ի գիմի հարայց ես Կեսարու՝ խօսել ընդ նմա... բա՜ռք. զի՞ արդ չեմ կարող մեղկել և շրջել զմիտս նորա, որով լիցի ինձ փրկել զՀռովմ և զնա։ Ո՞՛ տայր եթէ 'ի դիցն ոք խօսէր ընդ իմ բերան, կամ տայր լեզուիս զո-

թութիւն. սակայն եթէ 'ի գերև ինչ ելցեն բանք իմ և վրէպ գտայց 'ի յուսոյս, եթէ ոչ խոնարհեցի գոռոզն, հարցի ապա, 'ի սուր անկցի. զաչս 'ի բաց դարձուցից, այլ ձգեցից զձեռն իմ. քաւ լինէն փոխանակել ընդ հօր զիմ հայրենիս. այս անաչառ ատեան Թող պսակեսցի կամ յամօթ լիցի. Թող զարմացին տիեզերք կամ զարհուրեսցին ընդ նորանշան գործս մեր. Բրուտոսի չէ ինչ փոյթ եթէ փառաց կամ անարգութեան արձան կանգնեսցէ. իմ կանխաւ յաչս եգեալ է զփառս և զանարգանս. աղատ եմ քաղաքացի, գիտեմ ես զարժանն. այլն ամենայն ոչ ինչ է։ Գնացէք, գնացէք, ով քաջք, և 'ի ծառայութենէդ ելանեալ խորհեցարուք։

Կաս. Ցոյս հասարակաց 'ի քեզ է. բանք քո մեզ առհաւատչեայ, և մեք ինքնին 'ի քեզ եմք ապաստան. իբրու այն եթէ Կատոնի և Հռովմայ և կամ նոցուն իսկ աստուածոցն ընդ մեզ խօսեցաւ բերան։

Կիմբ. Ա՜հ, արդարև դու ես պսակ պարծանաց Հռովմայ, դու... սակայն ո՞վ է սա որ գայ առ մեզ։

Դեկ. Անտոնիոս է։

Բր. Անշուշտ Կեսար առաքէ զնա առ իս. կացէք աստ և միտ դիք բանից մերոց։

ՏԵՍԱՐԱՆ Դ

ԱՆՏՈՆԻՈՍ Մտանէ.

Անտ. Առ քեզ գամ, Բրուտէ, և կամիմ խօսել ինչ ընդ քեզ։

Բր. Ահաւասիկ կամ, խօսեաց։

Անտ. Սակայն հրաման է ինձ 'ի դիկտատորէն։

Բր. Լիցի և այդ, ներեմ քեզ։

Անտ. Հարկ է ինձ խօսել ընդ քեզ առանձինն։

Բր. Ես միայն եմ աստ, ոչ ինչ երբեք կարասցէ Կեսար ասել առ Բրուտոս և ծածկել կամիցի 'ի սոցանէ. սեր Հռովմայ արիւն և բարեկամութիւն մի հոգի 'ի քառեակ մարմինս զմեզ առագրեաց։

Անտ. Եթէ և համահայր եղբարք իցէք միմեանց։

Բր. Համավիշտ և համակարիք գտան ընդ իս 'ի նախատինս որդիութեան իմոյ. արդ ազէ խօսեաց. ինձ թուիթէ առաքեաց զքեզ բառնալ զնախատինս իմ 'ի մարդկանէ. հապա պատմեա մեզ զնորոգ մտացն հանդէս, և զարդի ծնեալ սեր նորա առ Հռովմ, և զսիրապէս առ իս ցոյցս հայրութեան. զի և ես օրհնեցից զօրն՝ յորում ծնայ։

Անտ. Հրաման էր դիկտատորին խօսել ընդ քեզ 'ի ծածուկ... Նա հայրախնամ գթով ակն ունի թէ փոխեսցիս 'ի խորհրդոց այսի, և քաղցրութեամբ ներքոյ դնիցես զանձն ազգարարող ձայնի և օրինաց բնութեան։

Բր. Իսկ զի՞նչ անսայցեմ ես, կամ զի՞նչ ունիցիմ գործել։

Անտ. Զի՞նչ ունիցիս գործէ՛լ. մեծարել և սիրել զծնողդ. կամ թէ սիրտ քո երկաթի սիրել ոչ գիտէ, գոնեա մի մատն լինել ապերախտութեամբ օրինաց բնութեան, և բաղում բարեաց արժանի գտանել. միթէ յառաւելագանցն համարիցիս նկրտել կամ ելանել այսու ըստ սահմանն մարդկութեան։...

Բր. Մի՛ 'ի զուր բազբաջեր. համառօտ ասա, և տուր ինձ հակիրճ պատասխանի։ Պատրաստ իցէ Կեսար յատենի ծերակուտին Թողուլ մերկանալ զդիկտատորութիւնն. պատրաստ իցէ արձակել զզօրն և անդէն մնալ. պատրաստ իցէ արձակել լուծանել յարհաւրաց աստի զմերս Հռովմայեցիս, զբարեկամս և զթշնամիս և զանձն իսկ գլխովին. և յոտին կացուցանել զնախատեալ և զաղարտեալ օրէնս հայրենի, և առաջին ընդ նոքաք մտանել, այս են բարերարութիւնք՝ զոր միայն կարէ ընծայել Բրուտոսի՝ թէ հայր իմ է հարազատ։

Անտ. Քաջ է. ունիս ինձ այլ ևս ասել։

Բր. Այլ ինչ ոչ ասեմ՝ որում չէ արժանի լսել ինձ. դարձ ապա առ տէրն քո և պատմեա զոր լուար։

Անտ. Ծանեայ արդ. զայն ինչ պատմեցից նմա՝ զոր մինչև ցարդ զուր տարապարտուց ասէի առ նա։

Բր. Անիրաւ և նենգաւոր հրեշտակ գիտեմ ես զքեզ ընդ Կեսար և ընդ Բրուտոս. սակայն եթէ նա առաքեաց զքեզ, առեր զպատասխանիդ։

Անտ. Եթէ ինձ անսացեալ էր Կեսար և բարեոյն Հռովմայ, ոչ ինչ այլ հրեշտակ պարտ էր առաքել առ Բրուտոս, բայց սպասաւորս տապարօք հանդերձ. (ելանէ)։

Կը շարունակուի։

ԲԱՆԱԼԻՒ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՑ

(Տես երես 126)

426 Ինչո՞ւ համար ծխաններն՝ տանիքներէ վեր այնպէս բարձր կը չինուին։ — Որպէս զի սենեկաց մէջ ծուխ չարձրկեն։ — Փորձուած է որ եթէ խողովակն 5 մեդր բարձրութիւն չունենայ՝ ծխանն գրեթէ միշտ ծուխ կը մտցընէ. ուրեմն որպէս զի շնչառութիւնն աղատ ըլլայ՝ ապահովութեան համար պէտք է ինչուան 10 մեդր բարձրացընել ծխանը։

427 Ինչո՞ւ համար եթէ ծխանն ցած ըլլայ՝ ծուխն ներս կը մտնէ։ — Որովհետև օդառութիւնն ծանր և շատ տկար ըլլալով՝ չիկրնար ծուխը խողովակէն դուրս հանել։

428 Ինչո՞ւ համար եթէ ծխանն կարճ ըլլայ օդաձգութիւնն ալ շատ ծանր և տկար կ'ըլլայ։ — Որովհետև օդուն վազուկներուն ոյժն այնչափ աւելի կ'ըլլայ՝ որքան որ ծխանն երկայն է, և այնքան տկար՝ որքան որ ծխանն կարճ ըլլայ։ — Սակայն օդառութեան աւելնալուն ալ չափ մը կայ. եթէ ծխանն շատ բարձր ըլլայ՝ այն ատեն ալ ծուխ կը պատճառէ։

429 Ինչո՞ւ համար շատ բարձր ծխանն